

## ՏԱՐԻ ՄԸ ԱՌԱՋ (ԼԵՒՈՆ ՎԱՐՂԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ)



10 Գեկտեմբեր 1997ին իր մահկանացուն կնքեց Հայկազեան Հայագիտական Հանդեսի խմբագրական կազմի անդամ Լեւոն Վարդան: Ան ծնաւ Հալեպ, 1925ին եւ իր գիտակցական տարիքը քնակոխեց Երկրորդ Համաշխարհային պատերազմի շրջանին՝ ականատես ըլլալով Հայաստանի ու Սփիւռքի յատկապէս միջին-արեւելեան ընթացքին ու վերիվայրումներուն: Երբեմն առընչուեցաւ այդ ընթացքի գրական-մշակութային կարգ մը դրուագներուն, գերազանցապէս մնալով զանոնք արժեւորողի համգամանքին մէջ:

Ան իր յատկանշական նպաստը բերաւ մանաւանդ լիբանանահայ կրթա-մշակութային կեանքին, ուր իր անփոխարինելի տեղը ունի Հայկազեան Համալսարանը:

Լեւոն Վարդան Հայկազեան Գոլէճի (այժմ՝ Համալսարան) դասախօսական ընտանիքին միացաւ 1967ին: Յաջորդող քառորդ դարուն ան համարեաւ անընդմեջ դասախօսեց Գոլէճի Հայագիտական ամպիոնէն ներս՝ աւանդելով հայոց պատմութեան ու հայ գրականութեան վերաբերող շարք մը դասանիւթեր, շեշտը դնելով յատկապէս Օսմանեան դարաշրջանի եւ Հայկական Հարցի պատմութեան, ինչպէս եւ 19 ու 20րդ դարերու հայ արձակին ու բանաստեղծութեան վրայ: Միաժամանակ, Լեւոն Վարդան Գոլէճի ընդհանուր պատմութեան բաժան-

մունքին մէջ դասախօսեց Երոպայի, Օսմանեան կայսրութեան եւ Լիբանանի պատմութիւն, ինչպէս նաեւ երբեմն՝ համաշխարհային քաղաքակրթութիւններ եւ ընդհանուր փիլիսոփայութեան ներածութիւն: Մեծ Եղեռնի 60ամեակի ոգեկոչման գծով միջոցառումներու ծիրէն ներս, Հայկազեան Գոլէճը իրեն փտահեցաւ Լիբանանի մէջ Եղեռնէն վերապրողներ գտնելու, անոնց հետ հարցազրոյցներ կատարելու եւ վերջիններս ձայներիզներու վրայ արձանագրելու պարտականութիւնը: Այդ ժամանակաշրջանին արձանագրուած շուրջ 60 երիզները ցարդ կը մնան Հայկազեան Համալսարանի Հայագիտական գրադարանի արժեքատուր աւանդներէն:

Լեւոն Վարդան ի սկզբանէ եղաւ Հայկազեան Հայագիտական Հանդէտով խանդավառուողներէն. ան անխոնջ կերպով աշխատակցեցաւ Հանդէտին, իսկ 1992էն ետք եղաւ անոր խմբագրական կազմի ամենագործօն անդամներէն:

Ստորեւ կը հրատարակենք Լեւոն Վարդանի առանձին հատորով լոյս ընծայած եւ հայ պարբերական մամուլին մէջ լոյս տեսած բանասիրական բնոյթի յօդուածներու մատենագիտութիւնը, գոր պատրաստեց Կարօ Աբրահամեանը:

*ԽՄԲ.*

#### ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆԿ ԼԵՒՈՆ ՎԱՐԴԱՆԻ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՏՈՐՈՎ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԳՈՐԾԵՐՈՒՆ ԵՒ ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՅՕԴՈՒԱԾՆԵՐՈՒՆ

Լեւոն Վարդան իր ողջուիթեան մէկտեղած էր իր ինքնակենսագրական եւ մատենագիտական տուեալները: Արդարեւ, 7 Ապրիլ 1994 թուագրեալ եւ «Կենսագրական եւ գրական գործունէութիւն Լեւոն Վարդանի — գիծեր ու նշումներ» խորագրով, ան ձեռագիր 12 էջով եւ 13 գլուխներու տակ կու տար իր ուսումնական կեանքի, ուսուցչական ասպարէզի, ընկերային եւ ազգային ծառայութեան կարեւոր հանգրուանները, ինչպէս նաեւ կարելի մանրամասնութեամբ կը դասաւորէր իր հրատարակած եւ խմբագրած գործերը, անտիպները եւ թարգմանութիւնները, խմբագրական աշխատանքը, մամուլի աշխատակցութիւնը, եւ վերջապէս՝ ցանկը իր մասնակցած համագումարներուն եւ ստացած մրցանակներուն ու զնահատագիրներուն:

5 Դեկտեմբեր 1997ին, Պէյրութի ՀԵԸԻ Մշակութային Մարմինի կողմէ կազմակերպած իր վաստակին նուիրուած «Յարգանքի Երեկոյին» առթիւ, Կարօ Աբրահամեանի խմբագրութեամբ կը հրատարակուէր յատարակիր—գրքոյկ մը, ուր առաջին անգամ կը հրատարակուէին Լեւոն

Վարդանի կենսագրական տուեալները, եւ ցանկը իր՝ առանձին հատորով լոյս տեսած գործերուն, անտիպներուն, խմբագրած ու աշխատակցած հրատարակութիւններուն:

Մատենագիտական ներկայ աշխատասիրութիւնը ընդլայնուած մէկ տարբերակն է վերոնշեալ յայտագիր-գրքոյկին: Յատուկ ջանք թափուած է մէկտեղելու Լեւոն Վարդանի հայ պարբերական մամուլի մէջ ցրուած պատմագիտական ընոյթի յօդուածները: Նկատի առնուած են նաեւ իր հայագիտական հանդէսներու մէջ ստորագրած յօդուածները: Այս մատենագիտութիւնը չ'ընդգրկէր անոր մամուլի մէջ ցրուած քերթուածները, արձակ էջերը, գրադատական, գրականագիտական, գրախօսական, խմբագրական եւ անստորագիր այլ յօդուածները:

Մատենագիտական ներկայ աշխատասիրութեան համար յատկապէս օգտուած ենք Լեւոն Վարդանի անձնական գրադարանէն, արխիւէն, մատենագիտութեան մէջ նշուած պարբերաթերթերու Հայկազեան Համալսարանի Հայագիտական գրադարանի հաւաքածոներէն, Լեւոն Վարդանի վերոնշեալ անտիպ ինքնակենսագրականէն, ինչպէս նաեւ հետեւեալ մատենագիտական աշխատասիրութիւններէն:

– Լեւոն Վարդան, «Այս Քանի Մը էջերը», Շիրակ, ԻԶ. տարի, Յունւար-Փետրուար 1982, էջ 1–98:

– Լեւոն Վարդան, «Այս էջերը», Շիրակ, ԼԱ. տարի, Ապրիլ 1987, էջ 34–64:

– Սագօ Օգնայեան, Մատենագիտութիւն Սփիւռք Շաքաթաթերթի 1958–1978. Պէջրութ, 1984:

#### ԱՌԱՆՁԻՆ ՀԱՏՈՐՈՎ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԳՈՐԾԵՐ

– Գիրք Մենուասի (արձակ էջեր), Պէջրութ, 1959:

– Փինիկեան Ափերուն Վրայ (արձակ էջեր), Պէջրութ, 1960:

– Ինքներգութիւն (քերթուածներ), Պէջրութ, 1968:

– Հայկական Տասնհինգը եւ Հայերու Լքեալ Գոյքերը (պատմագիտական), Պէջրութ, 1970:

– Ժամանակագրութիւն Հայկական Տասնհինգի 1915–23 (պատմագիտական), Պէջրութ, 1975:

– Թող Թուրքը Խօսի (պատմագիտական), Պէջրութ, 1975:

– Ի Խորոց Սրտի (քերթուածներ), Պէջրութ, 1982:

– Էջմիածնասէր Տիկնանց Համախմբում, 1959–1984 (պատմագիտական), Պէջրութ, 1984:

– Մուշեղ Իշխան Արձակագիրը (գրականագիտական), Պէջրութ, 1986:

– Հայը եւ Հայաստանը (իմաստասիրական), Պէջրութ, 1994 (պատմահինուած հրատարակութիւն մը, միայն 10 օրինակ հրատարակուած):

- Կրկին Հեծուքիւն (*քերթուածներ*), Պէյրուսթ, 1996:
- Հին Հին Բաներ (*յուշագրական*), Պէյրուսթ, 1997:
- Հայկական Տասնհինգը Թուրք Մատենագիտութեան և Մամուլին Մէջ և Մենք (*պատմագիտական*), Պէյրուսթ, 1997:
- Արեւմտահայութիւնը Տնտեսական Յարաբերութիւններու Դամբուն Կրայ (*պատմագիտական*), Պէյրուսթ, 1998:
- Մարդեր՝ Դամբու Մայթերէն (*յուշագրական*) (*մամուլի տակ*):

#### **ՀԱՌԱՔԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԵ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԳՈՐԾԵՐ**

- «Յեղասպանութիւն. Ծրագրուած Ու Նախապատրաստութիւնը». *տես Գերսամ Ահարոնեան եւ Նազարէթ Թոփալեան (խմբ.)*, 1915–1965 Յուշամատեան Մեծ Եղեռնի. Պէյրուսթ, 1965, էջ 173–213:
- «Կարինի եւ Շրջակայքի Տեղահանութիւնն Ու Ջարդերը», *նոյն տեղը*, էջ 434–464:
- «Շահնուր Իմացապաշտը», *Յակոբ Գուլումճեան (խմբ.)*, Օսիւնուրեան Ընթերցումներ. Պէյրուսթ, 1983, էջ 87–136:
- «Մենք եւ Փաստագրուածը Հայկական Տանհինգին. Հարցազրուածներ». *տես՝ Գ[ասպար] Տէրտէրեան (խմբ.)*, Յո<sup>ր</sup> երթաս Հայ Սփիւրք..., Պէյրուսթ, 1989, էջ 120–163:

#### **ԱՆՏԻՊ ԳՈՐԾԵՐ**

- Հարկերը Օսմանեան և Պարսկական Կայսրութիւններու Մէջ, ԺԵ.–Ի. դարեր (*հինգ հատորնոց «բառարան» մը. Պատրաստ են առաջին երկու հատորները՝ Աէն մինչեւ Խ տառը. Տպագրական մօտ 1500 էջ*):
- Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը Լիբանանի մէջ, 1930–1980. (*տպագրական 300 էջ*):
- Հայ Երիտասարդաց Ընկերակցութիւն, 1930–1980. (*տպագրական 250 էջ*):
- Բաց Հորիզոններու Աէն (*ճամբորդական յուշեր, տպագրական 500 էջ*):
- Օրագիր՝ Տխուր և Գեղեցիկ Բաներու (*գեղարուեստական արձակ էջեր, տպագրական 225 էջ*):
- Օրագիր Գրուած Կրակի Տակ (*օրագիր յիբանանեան պատերազմին, տպագրական 300 էջ*):
- Կանաչ Պատաղիներ (*իմացական էջեր, տպագրական 200 էջ*):
- Հայաստանի Չարդերը, 1895–1896 (*տպագրական 350 էջ*):
- Հայն ու Հայութիւնը՝ ըստ թուրք պատմաբան Միմ Քենալ Էօքէի (*տպագրական 200 էջ*):

- Տրդատ՝ Արքայ Հայոց (տաղաչափեալ թատրերգութիւն, տպագրական 150 էջ):
- Վերջին Մոսկիաններն Ոսմանք (վերապրողներու վկայութիւններ, տպագրական 150 էջ):
- Պատմական Հետազոտութիւններ. Փաստերն ու Փաստաբուրքերը (տպագրական 300 էջ):
- Տրդատականք (քերթուածներ, տպագրական 100 էջ):
- Չայնաւոր Ջրոյց (հնչեակներ, տպագրական 120 էջ):
- Երգ Մարդու Մասին (քերթուածներ, տպագրական 100 էջ):
- Հարցապնդում (քերթուածներ, տպագրական 100 էջ):
- Գիրք Պեղումի (գրականագիտական յօդուածներ, տպագրական 200 էջ):
- Ակնարկ Լիբանանահայ Գրականութեան Վրայ (տպագրական 700 էջ):
- Մենք եւ Փաստագրումը Հայկական Տասնհինգի (տպագրական 100 էջ):
- Հայաստանի Չարդերը (տպագրական 120 էջ):
- Դուն կը ճանչնա՞ս Թուրքը (տպագրական 80 էջ):
- Հայերը Օսմանեան Կայսրութեան Մէջ, 1800–1880 (տպագրական 300 էջ):
- Չարդերը Օսմանեան Կայսրութեան Մէջ, 1808–1908 (տպագրական 200 էջ):
- Հայերէնը Այնթապահայոյ Բերնին Մէջ (տպագրական 150 էջ):

**ԱՆՏԻՊ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ**

- Ճպրան Խալիլ Ճպրան – Մարգարէն:
- Ճպրան Խալիլ Ճպրան – Մարգարէին Պարտեզը:
- Ճպրան Խալիլ Ճպրան – Մարգարէին Չայնը:
- Վէյսէլ Էրօղլու – Հայկական Խժոժութիւններ:

**ՀԱՅԿԱԳՆԱԿԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՄԻ ՄԷՉ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ՅՕԴՈՒԱԾՆԵՐ**

- «Խորականութիւնը Օսմանեան Կայսրութեան Մէջ», Հատոր Ա., 1970, էջ 9–44:
- «Հայկական Տասնհինգը եւ Թուրք Գերմանական Դաշնագիրը», Հատոր Բ., 1971, էջ 45–79:
- «Ժամանակագրութիւն Հայկական Տասնհինգի», Հատոր Գ., 1972, էջ 259–281:
- «Պատասխանատուները Հայոց Դէմ Գործադրուած Յեղասպա-

- նութեան», Հատոր Դ., 1973, էջ 67–79:
- «Օսմանեան Հարկային Կանոնադրութիւնները եւ Արեւմտահայութիւնը», Հատոր Զ., 1977–78, էջ 105–157:
  - «Օսմանեան Քանի մը Հարկեր Ըստ Կանոնադրութիւններու», Հատոր Է., 1979, էջ 57–83:
  - «Մուսա Լերան Երկրորդ Արտագաղթը», Հատոր Ը., 1980, էջ 147–197:
  - «Վեր-Տիգրան Խրչոբեան», Հատոր ԺԲ., 1992, էջ 11–38:
  - «Պոլսահայութիւնը, Բարձրագոյն Դուռը եւ Այլ Բաներ (30 Սեպտեմբեր 1895)», Հատոր ԺԲ., 1992, էջ 145–171:  
Հատոր ԺԳ., 1993, էջ 129–170:  
Հատոր ԺԴ., 1994, էջ 99–145:
  - «Խարբերդ՝ Օսմանեան Կայսրութեան «Սպանդանոց Նահանգը», Հատոր ԺԳ., 1993, էջ 311–345:
  - «Հայկական Տասնհինգը Թրքական Մատենագիտութեան Մէջ», Հատոր ԺԵ., 1995, էջ 301–372:
  - «Պատմութեան, Պատմագրութեան եւ Այլ Բաներու Մասին», Հատոր ԺԷ., 1997, էջ 157–204:

**ՀԱՍԿ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՏԱՐԵԳԻՐՔԻ (ՆՈՐ ՇՐՁԱՆ) ՄԷՉ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ՅՕԴՈՒԱԾՆԵՐ**

- «Հայերէնը Այնթապցիներու Բերնին Մէջ», Հատոր Ա., 1980, էջ 231–254:  
Հատոր Բ.–Գ., 1981–82, էջ 365–382:
- «Հակիրճ Պատմութիւն», Հատոր Դ.–Ե., 1983–84, էջ 365–382:
- «Հայաստանի Ջարդերը», Հատոր Զ., 1994, էջ 257–276:
- «Կրկին Յաւելուած», Հատոր Է.–Ը., 1995–96, էջ 221–230, (յաւելուած «Հայերէնը Այնթապցիներու Բերնին Մէջ» յօդուածին):

**ՀԻՄՆՍԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՄԻ ՄԷՉ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ՅՕԴՈՒԱԾ**

- «Հարկերը Օսմանեան Կայսրութեան Մէջ», Հատոր Ա., 1993, էջ 181–204:

**ԲԱԶՄԱՎԷՊԻ ՄԷՉ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ՅՕԴՈՒԱԾ**

- ««Ժողովուրդ» եւ «Ազգ» բառերու եզրային առընչութիւններու Մասին», Հատոր ՃԺԴ., 1996, էջ 46–63:

**ՍՓԻՒՌ ՇԱՐԱԹԱԹԵՐԹԻ ՄԷՉ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ՅՕԴՈՒԱԾՆԵՐ**

- «Սկզբնաւորութեան Մը Վախճանը», Ա. տարի, թիւ 46-52, 31  
Դեկտեմբեր 1959, էջ 8-9:
- «Էմիլի Ճ. Ռապինսընի Թուղթի Մասին»,  
Լ. Տարի, թիւ 25, 30 Յունիս 1966, էջ 3-10 եւ  
Լ. Տարի, թիւ 26, 7 Յուլիս 1966, էջ 6-10:
- «Հայկական Լքեալ Գոյքերու Հարցը Ըստ Թրքական Աղբիւր-ներու»,  
Լ. Տարի, թիւ 43, 3 Նոյեմբեր 1966, էջ 8-9,  
Լ. Տարի, թիւ 44, 10 Նոյեմբեր 1966, էջ 8-9,  
Լ. Տարի, թիւ 45, 17 Նոյեմբեր 1966, էջ 5-9,  
Լ. Տարի, թիւ 46, 24 Նոյեմբեր 1966, էջ 4-5,  
Լ. Տարի, թիւ 47, 1 Դեկտեմբեր 1966, էջ 6-7,  
Լ. Տարի, թիւ 48, 8 Դեկտեմբեր 1966, էջ 8-9 եւ  
Լ. Տարի, թիւ 49, 15 Դեկտեմբեր 1966, էջ 8-9:
- «Նալիտէ էտիպի Յուշերը», ԺԷ. Տարի, թիւ 6, 16 Փետրուար 1975, էջ  
6-7:
- «Ի Բերանոյ Քուժմէ ... Թող Թիւրքը Նօսի», ԺԷ. Տարի, թիւ 15-16, 27  
Ապրիլ 1975, էջ 6-7:
- «Ժամանակագրութիւն Հայկական Տասնհինգի 1915-1923», ԺԷ. Տարի,  
թիւ 25, 20 Յուլիս 1975, էջ 1-7:
- «Վերջին Մոհակներէն Մէկը - Արուսեակ Քեպապճեանի Յուշերը»,  
ԺԷ. Տարի, թիւ 31, 31 Օգոստոս 1975, էջ 6-7, եւ  
ԺԷ. Տարի, թիւ 32, 7 Սեպտեմբեր 1975, էջ 6-7:

**ՇԻՐԱԿ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏՆԵՐՈՒ ԱՄՍԱԳԻՐԻ ՄԷՉ  
ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ՅՕԳՈՒԱԾՆԵՐ**

- «Հայկական Եղեռնէն Առաջ», Հատոր Թ., Ապրիլ-Մայիս 1965, էջ 170-  
197:
- «Հայկական Տասնհինգը եւ Հայերու Լքեալ Գոյքերը [Քննական  
ակնարկ՝ ըստ Թրքական վաւերագիրներու]»,  
Հատոր ԺԲ., Մարտ-Ապրիլ 1968, էջ 166-177,  
Հատոր ԺԲ., Մայիս 1968, էջ 235-245,  
Հատոր ԺԲ., Յունիս-Յուլիս 1968, էջ 295-311,  
Հատոր ԺԲ., Օգոստոս-Սեպտեմբեր 1968, էջ 388-401,  
Հատոր ԺԲ., Հոկտեմբեր-Նոյեմբեր 1968, էջ 474-484,  
Հատոր ԺԲ., Դեկտեմբեր 1968, էջ 564-578,  
Հատոր ԺԳ., Յունուար-Փետրուար 1969, էջ 62-70,  
Հատոր ԺԳ., Մարտ-Ապրիլ 1969, էջ 161-175, եւ  
Հատոր ԺԳ., Մայիս-Յուլիս 1969, էջ 257-263:

- «Հայկական Տասնհինգը եւ Օսմանեան Պէյլաննամէներ», Հատոր ԻԴ., Ապրիլ 1980, էջ 38-48:
- «Աքսորեալները», Հատոր ԻԴ., Ապրիլ 1980, էջ 49-52:
- «Վերջիններէն Մէկը», Հատոր ԻԵ., Մարտ-Ապրիլ, 1981, էջ 43-71:
- «Մերկերու Բանակ», Հատոր ԻԷ., Յունուար-Փետրուար 1983, էջ 81-94:
- «Դիւանագիտական Այս Թուղթը...», Հատոր ԻԸ., Ապրիլ-Մայիս 1984, էջ 52-71:
- «Հայկական Թղթածրար»,  
  - Հատոր ԼԴ., Մարտ-Մայիս 1990, էջ 23-90,
  - Հատոր ԼԵ., Մարտ-Մայիս 1991, էջ 95-123,
  - Հատոր ԼԵ., Յունիս-Օգոստոս 1991, էջ 106-117,
  - Հատոր ԼԶ., Յունուար-Փետրուար 1992, էջ 81-90, եւ
  - Հատոր ԼԶ., Մարտ-Ապրիլ 1992, էջ 94-106:
- «Դուն Կը Ճանչնաս Թուրքը»,  
  - Հատոր ԼԴ., Մարտ-Մայիս 1990, էջ 60-70, եւ
  - Հատոր ԼԴ., Օգոստոս-Սեպտեմբեր 1990, էջ 87-95:
- «Գաղտնի Շրջաբերական», Հատոր ԼԶ., Մայիս-Յունիս 1992, էջ 100-106:
- «Իւչ Փաշայար Գավկասը», Հատոր ԼԷ., Ապրիլ-Մայիս 1993, էջ 86-99:

**ՆՈՐ ԱՅՆԹԱՊԻ ՄԵՉ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ՅՕԳՈՒԱԾՆԵՐ**

- «Մեր Հերոսապատումը», ԺԳ. Տարի, Թիւ 49, 1972, էջ 10-14:
- «Կազմանթէպի Բժշկական Վարժարանն եւ Փոքրամասնութիւններուն Դպրոցները», ԻԶ. Տարի, Թիւ 17-22 (89-95), 1992, էջ 156-160:
- «Տառապանքի Օրագիր», ԻԷ. Տարի, Թիւ 23-28 (95-100), 1996, էջ 42-47:

**ՋԱՆԱՍԷԴԻ ՄԵՉ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ՅՕԳՈՒԱԾՆԵՐ**

- «Յանուն Ճշմարտութեան», ԻԶ. տարի, Թիւ 1, Օգոստոս 1963, էջ 337:
- «Մենք եւ Մեր Պատմութիւնը»,  
  - ԻԶ. տարի, Թիւ 15, 1 Օգոստոս 1963, էջ 340-341,
  - ԻԶ. տարի, Թիւ 16, 15 Օգոստոս 1963, էջ 366-367,
  - ԻԶ. տարի, Թիւ 17-18, 1-15 Սեպտեմբեր, էջ 390-391,
  - ԻԶ. տարի, Թիւ 21, 1 Նոյեմբեր 1963, էջ 468-470:

**ՉԱՐԹՕՆՔ ՕՐԱԹԵՐԹԻ ՄԵՉ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ՅՕԳՈՒԱԾՆԵՐ**

- «Զարդերը Օսմանեան Կայսրութեան Մէջ, 1808-1908», Մայիս-Յունիս 1969 (յօդուածաշարք):

- «Հայերը Օսմանեան Կայսրութեան Մէջ, 1800–1880», Փետրուար–Մայիս 1971 (յօդուածաշարք):
- «Թրքական Վաւերագիր Մը Եւ Իր Պատմութիւնը», 11 Հոկտեմբեր 1974:
- «Թուրք Պիղմարքը», 4–5 Օգոստոս 1977:
- «Կոմս Վոլֆ–Մեթերնիխ եւ Արեւմտահայերը», 10–11 Օգոստոս 1977:
- «Երբ Թիւրքը Խօսին», 7–13 Սեպտեմբեր 1977:
- «Գազանը Որ Խօսեցաւ», 21–24 Սեպտեմբեր 1977:
- «Միլլէթը Սատրքա», 28 Սեպտեմբեր 1977:
- «Այսպէս Կը Գրեն Պատմութիւնը», 21–23 Հոկտեմբեր 1977:
- «Խաղը Կորսնցնելէ Ետք», 2–4 Նոյեմբեր 1977:
- «Արեւմտահայութիւնը Տնտեսական Յարաբերութիւններու Ճամբուն Վրայ», Դեկտեմբեր 1977 (յօդուածաշարք):
- «Ըսէ՛, Հա՛յ Ժողովուրդ», 31 Դեկտեմբեր 1978:
- «Կարճառօտ Աղօթագիրք», 2–4 Յունիս 1979:
- «Թուղթի Այս Կտորը...», 27–29 Յունիս 1979:
- «Ակամայ Պատասխան», 3–19 Օգոստոս 1979 (յօդուածաշարք):
- «Եւ Առաւօտ Մըն Ալ...», 4–5 Ապրիլ 1980:
- «Բաց Նամակ Թուրք Վիպագիր Պարպարոս Պայքարային», 23 Մայիս–7 Յունիս 1980 (յօդուածաշարք):
- «Թալէաթ Փաշայի Յետմահու Յուշերը», 1–7 Հոկտեմբեր 1982:

#### ԱՌԱՆՁՆԱՏԻՊ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լեւոն Վարդանի Հայկազեան Հայագիտական Հանդէսի եւ Հասկ Հայագիտական Տարեգիրքի մէջ ստորագրած բոլոր յօդուածները հրատարակուած են նաեւ առանձնատիպ (ի բացառեալ Հայկազեան Հայագիտական Հանդէսի Հատոր Ա-ի յօդուածի առանձնատիպէն, բոլորն ալ տեսած եւ ստուգած ենք):

Վերոնշեալներէն դուրս, հանդիպեցանք միայն հետեւեալ առանձնատիպին՝ «Ակնարկ Յրանսահայ եւ Ամերիկահայ Արձակին Վրայ», Պէյրութ, 1969 (առանձնատիպ Սփիւռք շարաթաթերթի) որ վերջերս, «Կարպիս Լ. Նազարեան Հիմնադրամ»-ի մատենաշարով լոյս տեսած Լեւոն Վարդանի Արեւմտահայութիւնը Տնտեսական Յարաբերութիւններու Ծամբուն Վրայ Հատորին մէջ թիւրիմացաբար ներկայացուած է իրրեւ առանձին հատորով լոյս տեսած գրականագիտական երկ:

ԿԱՐՕ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ